ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ

2020-2022թթ. ՀՀ տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ (հունվար-մայիս)

Տնտեսական ակտիվության ցուցանիշ (ՏԱՑ)՝ %







Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)



Տնտեսական ակտիվության ցուցանիշը 2022թ. հունվար-մայիսին 2021թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ (աճողական) կազմել է՝ 110.2%, 2021թ. հունվար-մայիսին 2020թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 104.4%, իսկ 2020թ. հունվար-մայիսին 2019թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 96.2%:

Արդյունաբերական արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2022թ. հունվար-մայիսին կազմել է 961 մլրդ 47.6 մլն դրամ, ինչը 2021թ. և 2020թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 120.3 և 225.4 մլրդ դրամով:

Իրականացված շինարարության ծավալը (ընթացիկ գներով) 2022թ. հունվար-մայիսին կազմել է 112 մլրդ 44.9 մլն դրամ, ինչը 2021 և 2020 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 17.5 և 34.6 մլրդ դրամով:

Առևտրի շրջանառությունը (ընթացիկ գներով) 2022թ. հունվար-մայիսին կազմել է 1 տրլ 421 մլրդ 437.6 մլն.դրամ, ինչը 2021 և 2020 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 234.3 և 394.7 մլրդ դրամով. իսկ այլ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2022թ. հունվար-մայիսին կազմել է 906 մլրդ 614.2 մլն դրամ, ինչը 2021 և 2020 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 203.5 և 188.4 մլրդ դրամով:

Արդյունաբերական արտադրանքի ծավալի իրական աճը 2022թ. հունվար-մայիսին 2021թ. հունվար-մայիսի նկատմամբ կազմել է 102.7%, 2021 և 2020 թվականների, ինչպես նաև 2020 և 2019 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 102.3%-ի և 102.4%-ի պարագայում:

Իրականացված շինարարության ծավալի իրական աճը 2022թ. հունվար-մայիսին 2021թ. հունվար-մայիսի նկատմամբ կազմել է 111.4%, 2021 և 2020 թվականների, ինչպես նաև 2020 և 2019 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 114.3%-ի և 76.6%-ի պարագայում:

ԱԺԲԳ

Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)





Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)





Առևտրի շրջանառության իրական աճը 2022թ. հունվար-մայիսին 2021թ. հունվար-մայիսի նկատմամբ կազմել է 108.9%, 2021 և 2020 թթ., ինչպես նաև 2020 և 2019 թթ. համեմատվող նույն ժամանակաշրջանների 107.4%-ի և 89.2%-ի պարագայում. իսկ ծառայությունների ծավալի իրական աճը 2022թ. հունվար-մայիսին 2021թ. հունվար-մայիսի նկատմամբ կազմել է 124.9%, 2021 և 2020 թթ., ինչպես նաև 2020 և 2019 թթ. համեմատվող նույն ժամանակաշրջանների 100.9%-ի և 95.8%-ի պարագայում:

Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2022թ. հունվար-մայիսին կազմել է 248 մլրդ 586.5 մլն դրամ, ինչը 2021թ. և 2020թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 11.6 և 100.9 մլրդ դրամով:

Մշակող արդյունաբերության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2022թ. հունվար-մայիսին կազմել է 559 մլրդ 470,7 մլն դրամ, ինչը 2021թ. և 2020թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 81.5 և 88.4 մլրդ դրամով:

Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2022թ. հունվար-մայիսին կազմել է 143 մլրդ 59.2 մլն դրամ, ինչը 2021թ. և 2020թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 25.9 և 34.5 մլրդ դրամով:

Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2022թ. հունվար-մայիսին կազմել է 9 մլրդ 931.2 մլն դրամ, ինչը 2021թ. և 2020թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 1 մլրդ 347 մլն և 1 մլրդ 718.3 մլն դրամով:

Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2022թ. հունվար-մայիսին 2021թ. հունվար-մայիսի նկատմամբ կազմել է 87.9%, 2021 և 2020 թվականների, ինչպես նաև 2020 և 2019 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 108.4%-ի և 125.7%-ի պարագայում:

Մշակող արդյունաբերության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2022թ. հունվար-մայիսին 2021թ. հունվար-մայիսի նկատմամբ կազմել է 110.6%, 2021 և 2020 թվականների, ինչպես նաև 2020 և 2019 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 98.6%-ի և 96.6%-ի պարագայում:

Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2022թ. հունվարի-մայիսին 2021թ. հունվար-մայիսի նկատմամբ կազմել է 100.3%, 2021 և 2020 թվականների, ինչպես նաև 2020 և 2019 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 110.0%-ի և 103.4%-ի պարագայում:

Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2022թ. հունվար-մայիսին 2021թ. հունվար-մայիսի նկատմամբ կազմել է 105.8%, 2021 և 2020 թվականների, ինչպես նաև 2020 և 2019 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 104.5%-ի և 79.3%-ի պարագայում:

ԱԺԲԳ

Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)



Սպառողական գների ինդեքսը (ՍԳԻ) նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)



Զուտ միջազգային պահուստներ (ԶՄՊ), ժամանակաշրջանի վերջի դրությամբ, մլն. դրամ





Մշակույթ, զվարճություններ և հանգիստ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2022թ. հունվար-մայիսին կազմել է 104 մլրդ 524.3 մլն դրամ, ինչը 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 3.7 մլրդ դրամով, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 82.8 մլրդ դրամով:

Տեղեկատվություն և կապ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2022թ. հունվար-մայիսին կազմել է 160 մլրդ 54.1 մլն դրամ, ինչը 2021 և 2020 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 34.6 և 48.9 մլրդ դրամով:

Ֆինանսական և ապահովագրական գործունեություն ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2022թ. հունվար-մայիսին կազմել է 261 մլրդ 740,8 մլն դրամ, ինչը 2021 և 2020 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 68.1 և 71.8 մլրդ դրամով:

Մշակույթ, զվարճություններ և հանգիստ ծառայությունների ծավալի իրական աճը 2022թ. հունվար-մայիսին ին 2021թ. հունվար-մայիսի նկատմամբ կազմել է 106.2%, 2021 և 2020 թվականների, ինչպես նաև 2020 և 2019 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 62.9%-ի և 104.8%-ի պարագայում:

Տեղեկատվություն և կապ ծառայությունների ծավալի իրական աճը 2022թ. հունվար-մայիսին 2021թ. հունվար-մայիսի նկատմամբ կազմել է 127.7%, 2021 և 2020 թվականների, ինչպես նաև 2020 և 2019 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 113.7%-ի և 105.4%-ի պարագայում:

Ֆինանսական և ապահովագրական գործունեություն ծառայությունների ծավալի իրական աճը 2022թ. հունվար-մայիսին 2021թ. հունվար-մայիսի նկատմամբ կազմել է 128.5%, 2021 և 2020 թվականների, ինչպես նաև 2020 և 2019 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 103.2%-ի և 111.7%-ի պարագայում:

ՍԳԻ-ն 2022թ. հունվար-մայիսին 2021թ. հունվար-մայիսի նկատմամբ կազմել է 107.7%, 2021թ. հունվար-մայիսին 2020թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 105.5%, 2020թ. հունվար-մայիսին 2019թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 100.3%: ՍԳԻ-ն 2022թ. մայիսին 2021թ. դեկտեմբերի նկատմամբ կազմել է 106.0%, 2021թ. մայիսին 2020թ. դեկտեմբերի նկատմամբ՝ 104.7%, 2020թ. ապրիլին 2019թ. դեկտեմբերի նկատմամբ՝ 102.5%:

Զուտ միջազգային պահուստները (ԶՄՊ) 2022թ. մայիսի վերջի դրությամբ կազմել է 1 տրիլիոն 20 մլրդ 392 մլն դրամ, ինչը 218.7 մլրդ դրամով կամ 21.4%-ով պակաս է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 10 մլրդ 987 մլն դրամով կամ 1.1%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Աշխատանք փնտրողների թիվը 2022թ. մայիսի դրությամբ կազմել է 78592 մարդ, ինչը 11771 մարդով կամ 15%-ով պակաս է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 8234 մարդով կամ 10.5%-ով պակաս է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից: Պաշտոնապես գրանցված գործազուրկների միջին ամսական թվաքանակը 2022թ. մայիսի դրությամբ կազմել է 54518 մարդ, ինչը 7683 մարդով կամ 14.1%-ով պակաս է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 6212 մարդով կամ 11.4%-ով պակաս է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

ԱԺԲԳ

ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունը և առևտրի հաշվեկշիռը (մլն ԱՄՆ դոլար)



ՀՀ արտահանումը և ներմուծումը (մլն ԱՄՆ դոլար)



Միջին ամսական անվանական աշխատավարձը աճողական, դրամ



Պետական բյուջեի պակասուրդի/հավելուրդի ֆինանսավորման աղբյուրները, ընթացիկ գներով, մլն դրամ



Արտաքին և փոխադարձ առևտրի առևտրաշրջանառության ծավալը 2022թ. հունվար-մայիսին կազմել է 3 մլրդ 913.4 մլն դոլար, ինչը 1 մլրդ 49.5 մլն դոլարով կամ 36.6%-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 1 մլրդ 351.1 մլն դոլարով կամ 52.7%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Արտաքին առևտրի բացասական հաշվեկշիռը 2022թ. հունվար-մայիսին կազմել է -1,142.4 մլն դոլար, ինչը 451.6 մլն դոլարով կամ 65.4%-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 398 մլն դոլարով կամ 48.3%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Արտահանման ծավալը (ՖՕԲ գներով) 2022թ. հունվար-մայիսին կազմել է 1 մլրդ 385.5 մլն դոլար, ինչը 299 մլն դոլարով կամ 27.5%-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 489.4 մլն դոլարով կամ 54.6%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Ներմուծման ծավալը (ՍԻՖ գներով) 2022թ. հունվար-մայիսին կազմել է 2 մլրդ 527.9 մլն դոլար, ինչը 750.6 մլն դոլարով կամ 42.2% -ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 861.7 մլն դոլարով կամ 51.7%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Միջին ամսական անվանական աշխատավարձը (աճողական) 2022թ. հունվար-մայիսին կազմել է 215228 դրամ, ինչը 19776 դրամով կամ 10.1%-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 27938 դրամով կամ 14.9%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

2022թ. հունվար-մայիսին ՀՀ պետական բյուջեի հավելուրդը կազմել է 46 մլրդ 348.3 մլն դրամ, ընդ որում, ներքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը՝ 27 մլրդ 428.8 մլն դրամ, արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը՝ -73,777.1 մլն դրամ: 2021թ. հունվար-մայիսին ՀՀ պետական բյուջեի պակասուրդը կազմել է 74 մլրդ 772.8 մլն դրամ: Ընդ որում ներքին և արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը կազմել է համապատասխանաբար -219 մլրդ 986.3 մլն և 294 մլրդ 759.1 մլն դրամ: 2020թ. հունվար-մայիսին ՀՀ պետական բյուջեի պակասուրդը կազմել է 25 մլրդ 597.4 մլն դրամ, ընդ որում, ներքին և արտաքին աղբյուրներից ֆինանսավորումը կազմել է համապատասխանաբար 38 մլրդ 136.6 մլն և -54 մլրդ 539.2 մլն դրամ:

Տեղեկատվության համար աղբյուր են հանդիսացել Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի ինտերնետային կայքի հրապարակումները ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ